ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2026թ. թիվ 786-Ա

Ա.ՏՈՆՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ
ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 22.1 մասով և հաշվի առնելով Ա.Տոնոյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավանի Հ.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Ալինա Տոնոյանին տրամադրել 2025-2026թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը 2026 թվականի նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 4-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր:

2. Ա.Տոնոյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի դեկտեմբերի 7-ից:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Կից գրությամբ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ա.Տոնոյանի պարտականությունները կատարող նշանակելու համար:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-11-13 10:15:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր